

անսովոր է և կ կիրկեան Ցարեզիբը յիշ-  
չելով ծանօթ Յովհաննէս արքեպիսկոպոսի  
ձեռնաղբւութիւնը, կ'ըսէ յայտնապէս՝ թէ  
ու ձեռնաղբւցին զարբայերպայրն զՊատինն  
եպիսկոպոս, և անուանեցաւ տէր Յոհաննէսւն:  
Միանգամայն կիրակոսի բացատրութեննէն  
յայտնի է՝ որ արքեպիսկոպոս ախտղոսը կա-  
թողիկուր կու տար:

Յ. Կելիկեան արքապիսկոպոսաց միոյն  
ըսվ տեսանք օգնական եպիսկոպոս մ'աւ.  
Սայ 1342ի ժողովն անոնց հայտառակ ե-  
պիսկոպոսներ և կը վերագրէ, գրելով  
այսպէս. «Եատ արքապիսկոպոսներ կան՝  
փոքր և մեծ Հայաստանի մէջ, թկան հր-  
պատակներ յունենան. վասն զի եպիսկո-  
պոսական վիճակներէն ումանց թափուր  
են, մերժուելով անհաւատներէն: Եւ մեծ  
Հայաստանի արքապիսկոպոսներէն ուրիշ-  
ներ յափշտակեցին իրենց հպատակաց ե-  
պիսկոպոսական վիճակները Եւ որովհետեւ  
անհաւատից տէրութեան ներբեն են, զա-  
նոնք չենց կարող բռնութեամբ ուղղել»:  
Տնիկութեանն ստոյգ մասն այն է՝ որ  
այդ ժամանակի արքապիսկոպոսներ հր-  
պատակներ յանեին. իսկ ինչ որ անցելոյն  
համար կ'ըսեն, անշոշտ ենթադրութիւն  
մ'է. և կամ կ'իմանային բարոյական  
ազդեցութիւն մը, զոր զօրաւոր աթոռները  
ստացեր էին զրացի սկարաց վրայ, հայ-  
րապետութեան օտար երկիրներ պանդի-  
տենուն ապահովաւ:

Այսպէս ուրեմն արքեպիսկոպոսութիւնը  
մեր ցով և կասած իրք ԺԱ զարուն, և հետ  
զեւսէտ տարածուած կարեւոր վիճակաց մէջ  
եղիք է լըկ տիտղոս մը, առանց իշխա-  
նութիւնան եպիսկոպոս ձեռնադրելու և մեռն  
օրննելու, որոնք երկուքն ալ կաթողիկո-  
սին սեպհական էին; Որով մեր արքեպիս-  
կոպոսներն իսկապէս հպատակ եպիսկո-  
պոսներ չեն ունեցեր. ոչ ալ որ և կ կապ-  
ներսիսեան կամ արքահամեան պատրի-  
արքութիւնան կեղակարծ աւանդութեան  
հետ; Եւ եղինո գոյութիւնը կախուած էր

ազգին քաղաքական բախտէն, որոյ համար իրենց թիւը, ժամանակն ու տեղողութիւնն ալ յեղ յեղուկ եռան:

2. ፭. ፲፻፮፻፻፻

የተሸጠበቃዎች

«ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ» ՈՒՆ՝

三

(*Собр. иностр. писем. 1927 № 43*)

ԺԷ. — Ցիւրնուածով վերանագեցաւ (էջ98).

« Երկուրեն ալ, կ'ըսէ, անհասկանալիք բառեր են» . բայց մենք կը կարծենք որ հաւանական ստուգաբանութիւն մը անհընար չէ Երկու բառերուն մէջ երկու դիտելու բաներ կան . մին գրչական, միւսը ցերականական : Խօսը Հոգուն Արքոյ արարշագործ զօրութեան վրայ է, որով «անգոյյաց» շատ վայելուց կիրապով դոյացան : Ուստի աստուածազն յիրենածով՝ սրբազնելի է աստուածազան յօրինածով : Իսկ «վերանեցնեան» ըսել է հիւստեցան, վերաստեղծուեցան, շինուեցան : «Անկանեմ» յաւելուածով բայն է, որուն հետ վեր մասնիկը միանալով՝ վերանեմ ձևը կ'առնէ . «վերանեանել» > բայց այս պարագային մէջ կրասորական ձեռվ է, վերանեցնեան վերանեցնեան, (գ և կ տառերը լծորդ են) ձեռվ : — Ուստի և Անգոյյաց յեղելութեան զանազանութիւնն աստուածազան (յիրենածով վերանեցնեան) յօրինուածով վերանեցնեան », այսպէս Բարումնեւ է :

« Բազմատեսակ արարածոց մէջ (զեռ) գոյութիւն չունեցող իրերը (== անօրոյ), աստուածանման յօրինուածով՝ կազմուած բոլ հիւստեցան, վեպասակեղծուեցան»: — Վշերան կանելքին համար հմմ. Նաև Ռուտանիակուրին:

1. *Illy 90*; = 2. *Mansi*, XXV, 1264.

Л. З.р. 11<sup>м</sup>и<sup>н</sup>и<sup>к</sup>и<sup>л</sup>. № 7. Վ է ն կ ա ր կ 1913:

ԺԲ. — Մաքրինանեմ (էջ 143).

«Նոր բասկր»ուն բազմահմուտ հեղինակը չէ անդրադարձած այս բառը սբրագրելու, այլ ընդունած է հրատարակութեած՝ Ախալ ընթերցման մարդինց է այս, և ուրիշ ոչչինչ։ «ՄԱՔՐԻ ՆԱՅԵՄ»։ այս է բառը, զոր պէտք է ուղղել նաև նարեկացոյ բոլոր հրատարակութեան մէջ։ «Նըգրմ»։ կամ հայկական հնչմամբ «Նամեմ»։ ինչպէս Բազմավիպի «Յունուար» թուով ըսկնց, ասող, արիի, արի ըսել է, ուսան ներկայ տողը հնտեւեալ կերպով գրելի, ընթեռնի և թարգմանելի է։

«Տերե ձեթենեաց տարածանն ընդուրից»։

«Ծնդ ոսկից մաքրողին՝ ՄԱՔՐԻ ՆԱՅԵՄ հրարին»։ «Մաքրողին՝ այսինքն՝ թիսուսի ոտքերուն ներքն, հրեղէն աստղը, արեր կը մաքրուի»։ (Հմմ. Նարեկ, մենզը. 471)։ Հայկազնանի միակ օրինակը նարեկացոյն առ ատղէն էր, և որուն սիսալ ընթերցումը կարծեմ ըստ բաւականի ցուցինք. Մաքրինամեմ, իրը մաքուր կերպով քալող, տեղոյս իմաստին անյարձար է։

ԺԹ. — Բաւեան (կամ բաւենի) (էջ 145).

«Բաւփա նշանակութիւնը, կ'ըսէ, բոլորովին անյայտ է»։ — Բաւեան (կամ բաւենի) կարծեմ բաւեմ բայէն յառաջ կու զայ և կը նշանակէ բաւական, ներիք։ Նախնիքաց տողերու մէջ զարնան բերած ընծաներուն վրայ կը խօսի, որով շատ բաւական է թէ բոյսերուն իրենց ծարաւը յազեցնելու բաւական, բաս բաւականի ցող կ'ընճայէ։ Աղդ նարեկացոյն երկու տողերուն իմաստը հնտեւեալ կերպով կարելի է թարգմանել (տ. Մտենգը. Գր. նարեկ. Վենետ. էջ 471)։

«Եմարաւ բաւեանց ցող փոխանակ նուծից չ».

«Որ զիմս ունելով՝ վերամբառնայ ի փառ»։

«Եմարաւը (յագեցնելու) բաւական ցող (կը բերէ), որ փոխանակ նոճիներու իմ (բնութիւնս) բռնած՝ փառը կը բարձրացը-

նէ»։ Բանաստեղծական գրութիւն մ'է այս, ուր փակագծի մէջ առնուած բառերը պէտք է լուելեայն իմանալ։ Այս իմաստը կարծեմ թէ բաւական յարմար է։

Ի. — Երազգգայ (էջ 146).

Բատ Պ. Աճառեանի Հայկազնեան բառովը կը յիշէ այս բառը Երազգգայից կամ յերազգայից ժեռվ, զայն «անսույց» կը կարծէ, ծագութն ալ ինքն յն. բառէն կը համարի։ Բայց մեզ անհասկնալի մնաց թէ հեղինակն ուր գտեր է այդ բառը. փնտռեցի յիշեալ բառզըրի մէջ երկու ձեռվ ևս՝ բան մը չզառայ. Նայեցայ նաև Ազգ բառին մէջ՝ բայց ի զուր։ — Բառիս քերականական կազմը լաւ հասկցեր է, բայց ոչ նոյնպէս անոր նշանակութիւնը, կը կարծէ թէ Ելրազգատրոս յատուկ անունչն յառաջ կու զայ, որուն նշանակութիւնը անյայտ է, կ'ըսէ։ — Բատ մեզ բառը ոչ յունարենի, ոչ ալ Երազգատրոս անուան հետ կապ ունի, զուռ հայերէն է, ստոյգ ծագութն ու նշանակութիւնն ալ այս է. կազմուած է երեք և Ազգ բառերէն, և ներկայ ձեռ յց. բացառական է։ Նարեկացին հոս իր բանաստեղծական խրթին ունով, կը զրէ թէ Երրորդութեան մէկ Անձը՝ «Ծոցածակներին», համագոյակից ըլլալով հանդերձ «անեղ» «աները» և «անեհաս» ինն՝ այսինքն՝ իր Հօր, հիմայ «իմահի» և մարդուս կողմանէ ըմբռնելի հետաւո։ Կ'ըլլայ։ Այդ խոնարհողը, է այն երեք անձերէն մին։ «Մինչն յէից զարմից յերազգայից»։ Այս տաղիս մէջ երկու անգամ գործածուեր է նոյն բառը, և երկու անգամմին ալ նոյն իմաստը նշանակելով։ Ակիզը, կը նշանակէ իուադէմ, իւսանձնեայ, Երրորդութիւն։ որով յերազգայից = յերրազգայից, այսինքն՝ երեք դմբ, անձն ունեցող Աստուածութիւնն մին։ Ուստի, Երազգայ կամ Երրազգայ = Երեք դմբ կամ երեք անձն ունեցող։ Հետեւարար, ուստիմասիրութիւնը աւելի Ազգ բառին վրայ կատարելու էր, որ հոս բոլորովին նոր առում ունի. ազգ կը նշանակէ անձն։

Քիչ մը ստորև դարձեալ կը զրի նոյն ստանաւորին մէջ։ «Ամրարձ յերամից յերազայիշ վերասլացիկ սա զայրմացմամբ»։ Ասու ևս նոյն նշանակութիւնն ունի։

Ի Ա. — Երամակ. (Եջ 147-9).

Այս բառը կ'ուզէ հասկնալ «ոչի»։ Յարգելով բանասիրին հեղինակութիւնը, կ'ըսեմ թէ պէտք չենք մեր լեզուն անսովոր և տարօրինակ մեկնութիւններու ենթարկելու։ — Հոս երամակ բառն իր ընտանի նշանակութեամբ շատ լաւ կը յարմարի, այսպէս։ «Անիծը անկերպաւորը և երամակը ումանց ըրտնածինց... կակծեցուցիչը»... կը նշանակէ «Անձեւ ու անկերպարան անիծներ, և ըրտնքէ ձեւացած զետուրիշ կակծեցուցիչ բազմուրին մը»... ինչ բանի բազմութիւնն էսկ հասկըցուի, նոյն տեսակ անտեսանելի և անձանօթ նեղիշ անասնիկներու բազմուրին։ Ուստի երամակ նարեկացւոյն կի թրկերգութեան մէջ՝ բազմութիւն կը նշանակէ։

Բ հասոր, 288 էջին մէջ ի հաստատութիւն իր մեկնութեան, Սեկունդոսէ վրկայութիւն մը կը թերէ որ ուզզակի իրեն դէմ է, և «Երամակ» բառին՝ միայն «Բազմուրին» նշանակելը կը ցուցնէ։ Կը զրէ Սեկունդոս. «Քանզի ի նոսա զեռունց խաղան, և ի թեզ ճնշք և երամակը ողլաց»։ Հոս իմաստը շատ պարզ է, կ'ըսէ. «Որովհետև անոնց մէջ զեռունեները կը բարւեն (կը վիտան), իսկ ցու մէջ՝ ճնշներ և ողլիներու բազմուրին»։ ուստի՝ Երամակ ։ բազմուրին։ Ապա թէ ոչ, եթէ Պ. Անտեսանին ըսածը ճիշտ ըլլար, պէտք էինք սապէս թարգմանել նախաղաստութիւնն... «իսկ ցու մէջդ ճնշներ և ողլիներու ոյիներ», որ անիմաստ է։

Ի Բ. — Հազրել. (Եջ 149).

Այս բառը չէ հասկցած, և կը հարցընէ, «արդեօք մազերուն մէջ ծաղիկ մը իրեկ, ծաղիկ մ'անցունելու իմաստն ունի»։ Ո՛չ! — Հազրել, զուտ արարերէն բառէ, ինչպէս նաև տաճկերէն, (հմմ. հազրը-

լէմէկ) ։ պատրաստել, յարդարել կը նշանակէ։

Ի Գ. — Սաթբերունի. (Եջ 153).

Բառիս լուսաբանութեան մէջ Սարք «Մերձեան» ։ = «Բուօս» կը թարգմանէ։ Անիծիշտ է այս, Սար հայերէն բառը՝ արարերէն կամ տաճկերէն մերձեան ըսուածը չէ, սարին քեհրապ կ'ըսեն անոնց, որմէ համրիշներ և մանկանց քառամանեաները կը կազմեն. իսկ մերձեան ըսուածնուն՝ հայերէն բառն կ'ըսենց։ Առաջինը համելի հոտ մ'ունի՝ և անոր համար սիրոյ իրը ածական զրուած է, իսկ երկրորդը՝ մերձեանը հոտ չունի։ Այսօր ալ արարները ելեկարպակնութեան քեհրապիէր ։ = սաթբականութիւն կ'ըսեն, որովհետև զիւտը սարեւ սկսեր կամ ճանչցուեր է։

Հ. Գրուոր Սարգսեան  
(շարումակելի)

## ԱՄԵՆԱՅՆ ԻՆՉ ՍՏՈՒԵՐ, ԱՄԵՆԱՅՆ

### ԻՆՉ ԼՈՅԾ Է ՑԱՆԻ.

—  
—  
—

Տողերիս գրողն 1882 թ. իւր ծննդավայր Վաւթարլի զիւղն կը գտնուէր, ուր եկան ուրիշ երկու Մխիթարեան Վարդապետներ Հ. Արապինն Պարոնեան և Հ. Կիւրեղ Եղոյեան, որք զնալու էին առաքելութեամբ Պարսկացոտն։ Փափարեցանց այցելութեան գնալ Անի, մեզի ընկերացաւ հօրաքեռ որդի Տէր Մաղարիս Եղեկեան, Թափառոլակ զիւղի ծխատէր շատ խելացի քահանայն։

Յուլիսի պայծառ և Զերմին օրերուց մին էր, մենք ֆարգոնով Ղեղաճի տակով կարեցինց անցանք Ախուրեան գետը։ Խօշայ-վանցն ձախակողմն թողած, յառաջ երթալով կը մօտենալինց Անիին։ Հեռուէն մողիշ տեսարան մը կը բացուէր մեր աշբերուն առջն, այնպէս կը թուէր թէ բարատունեաց մայրացաղաքն՝ Մմրատաշէն